ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ

ՄԱՐՄՆԻ/ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1. Խնդիրների ընդհանուր բնութագիրը և փոփոխությունների ընդհանուր ուղղությունները

1.1.Ընդհանուր բնութագիրը

Կոռուպցիայի դեմ պայքարում մշակվել են հակակոռուպցիոն ստանդարտներ պարունակող միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք սահմանում են կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի միասնական կանոններ: Հիշյալ փաստաթղթերից են՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան,[1] ԵԽ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան,[2] ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարի 20 ղեկավար սկզբունքները,[3] ԵԽ Քրեական իրավունքի մասին կոնվենցիային կից թիվ 173 բացատրական զեկույց,[4] Ջակարտայի սկզբունքները,[5] ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:[6] ՀՀ-ը միացել է կոռուպցիայի դեմ պայքարի վերը թվարկված առանցքային միջազգային իրավական փաստաթղթերին, որով պայմանավորված ստանձնել է հանձնառություններ ներպետական մակարդակում ստեղծելու և գործարկելու անկախության բարձր երաշխիքներով և քաղաքական որևէ ազդեցությունից զերծ հակակոռուպցիոն մարմին: Բացի այդ, հիշյալ միջազգային փաստաթղթերով ստանձնած հանձնառությունները կատարելու նպատակով, իրականացվում են նաև համապատասխանության և կատարողականների գնահատում և մոնիթորինգ, որի արդյունքներում մշակվում են զեկույցներ և երկրներին առաջարկվում լրացուցիչ հանձնառություններ: Հայաստանի վերաբերյալ վերջին զեկույցներից կարելի է թվարկել ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցը[7] և ԳՐԵԿՈ-ի Կոռուպցիայի կանխարգելումը խորհրդարանի

---

[1] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021

[2] ԵԽ-ի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիա, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=29959

[3] 06.11.1997թ.-ի ԵԽ նախարարների կոմիտեի Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին թիվ (97) 24 բանաձև, https://rm.coe.int/16806cc17c

[4] 27.01.1999թ.-ի ԵԽ քրեական իրավունքի մասին կոնվենցիային կից թիվ 173-րդ բացատրական զեկույց, https://rm.coe.int/16800cce441999

[5] 2012թ.-ի նոյեմբերի 26-27-ին հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարություն (Ջակարտայի սկզբունքներ), հայերեն տարբերակ՝ https://armla.am/wp-content/uploads/2019/01/Jakarta-statement-2012.pdf, անգլերեն տարբերակ՝ https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf

[6] ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124389

[7] Զեկույցը ամբողջությամբ հասանելի է՝ https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

անդամների, դատավորների և դատախազների մասով՝ Հայաստանի վերաբերյալ 4-րդ գնահատման զեկույցը,[8]

Թվարկված միջազգային իրավական փաստաթղթերը, սահմանելով հակակոռուպցիոն առաջնայնություններ և մեխանիզմներ, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման առումով հիմնական պայմաններից են դիտարկում կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և կոռուպցիոն հանցագործություններով նախնական քննություն իրականացնելու լիազորություններ ունեցող մարմնի/մարմինների ստեղծումը, որը/որոնք օժտված կլինի/կլինեն անկախության բարձր երաշխիքներով: Նման պայմաններում առաջանում է օբյեկտիվ անհրաժեշտություն դիտարկելու ՀՀ-ում սահմանադրական մակարդակում անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն մարմնի/մարմինների ստեղծման հարցը:

1.2. Փոփոխությունների ընդհանուր ուղղությունները

ՀՀ–ում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս հանդիսացող մարմնի/մարմինների ստեղծմանն ուղղված հետևյալ քայլերի իրականացում.

1. Ստեղծել իշխանության բոլոր թևերից անկախ՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող մասնագիտական հակակոռուպցիոն մարմին՝ մեկ (կենտրոնացված) կամ երկու (ապակենտրոնացված) մարմինների տեսքով, որը/որոնք գործունեություն կծավալի/կծավալեն մշտական հիմունքներով, ղեկավարումը կիրականացվի/կիրականացվեն միանձնյա (ոչ կոլեգիալ), և որի/որոնց հիմնական գործառույթները կլինեն կոռուպցիայի կանխարգելումը, հակակոռուպցիոն կրթությունը և կոռուպցիոն գործերով նախնական քննության իրականացումը: Ըստ այդմ,
    a. **որպես առաջնային տարբերակ** առաջարկվում է ստեղծել կենտրոնացված հակակոռուպցիոն մարմին, մասնավորապես՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ հակակոռուպցիոն մարմին՝ ամրագրելով նախնական քննության, կանխարգելիչ և կրթական գործառույթների կենսագործման համար անհրաժեշտ լիազորությունների շրջանակը:
    b. **Որպես երկրորդային տարբերակ** առաջարկվում է ստեղծել ապակենտրոնացված հակակոռուպցիոն մարմիններ, մասնավորապես՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող երկու առանձին մարմին: **Առաջինը՝** կանխարգելիչ և

[8] Զեկույցը ամբողջությամբ հասանելի է՝ https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680993e83?fbclid=IwAR0qMlhJpHp_Q_HkNRIMIzdbsizbNzh-068guPEwjgLYdOKAF-cxI4Do23A

կրթական, **երկրորդը՝** նախնական քննության գործառույթներ իրականացնող անկախ սահմանադրական մարմիններ։

c. **Որպես երրորդ տարբերակ** առաջարկվում է Սահմանադրության համապատասխան գլխում ամրագրել հակակոռուպցիոն մարմնի սահմանադրական կարգավիճակը՝ առանց հստակեցնելու, թե կոնկրետ ո՞ր մոդելն է գործելու ՀՀ-ում, միաժամանակ սահմանելով հետևյալ կարգավորումները՝

i. Հակակոռուպցիոն մարմինն ունի անկախության բարձր երաշխիքներ, այդ թվում նաև՝ քաղաքական չեզոքություն։

ii. Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարը ընտրվում է մրցութային կարգով և նշանակվում ԱԺ-ի կողմից՝ սահմանելով քվորումի բարձր շեմ և սահմանափակելով Սահմանադրության 202 հոդվածի 2-րդ մասի կիրառումը վերջինիս նկատմամբ։

iii. Հակակոռուպցիոն մարմնի լիազորությունները՝ նախնական քննության, կանխարգելիչ և կրթական ուղղություններով։

iv. Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարի անձեռնմխելի է և նրա նկատմամբ կիրառվում են այնպիսի անհամատեղելիության պահանջներ, որոնք առկա են ՄԻՊ-ի դեպքում։

2. Սահմանադրությամբ կարգավորել մասնագիտական հակակոռուպցիոն մարմնի/մարմինների գործառույթները և լիազորությունները, ղեկավարի ընտրության կարգը, մարմնի/մարմինների գործունեության երաշխիքները։ Նախատեսել, որ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների ղեկավարի թեկնածուների ընտրությունը կատարվում է բաց և հրապարակային մրցույթի արդյունքում, իսկ ղեկավարին ընտրում է Ազգային ժողովը։

3. Ընդունել առանձին օրենք/ներ, որը/որոնք կբխեն Սահմանադրությունից, և որով/որոնցով կկանոնակարգվի այդ մարմնի/մարմինների այլ լիազորությունները։

4. Օրենքով նախատեսել հակակոռուպցիոն մարմնի/մարմինների աշխատակազմի անդամների ընտրությունը բաց և հրապարակային մրցույթի արդյունքում՝ նախապես սահմանված հստակ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա։

5. Մարմնի/մարմինների կազմում ստեղծել հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհուրդ, որը վերահսկողություն կիրականացնի հակակոռուպցիոն մարմնի գործունեության նկատմամբ։

Այսպիսով, նշված մարմնի/մարմինների կարևորությունից ելնելով՝ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների իրավական հիմքերը պետք է նախատեսել ՀՀ Սահմանադրությամբ, որոնք պետք է նաև համասեռ լինեն մյուս Սահմանադրական մարմիններին։

1.3. Առկա վիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս բացակայում է/են կոռուպցիայի դեմ անկախության բարձր երաշխիքներով և քաղաքական ազդեցությունից չեզոք, սահմանադրական կարգավիճակ ունեցող կոռուպցիայի դեմ պայքարող համակարգի մաս հանդիսացող հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մասնագիտացված մարմին/մարմիններ, որոնցով պայմանավորված կոռուպցիայի մակարդակը դեռևս շարունակում է մնալ համեմատաբար բարձր մակարդակի։ Ներկայումս շրջանառության մեջ գտնվող օրենսդրական փոփոխությունների փաթեթների ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ-ն գնում է ապակենտրոնացված՝ տարանջատված հակակոռուպցիոն մարմիններ ունենալու ճանապարհով։ Այսինքն՝ մի կողմից հակակոռուպցիոն քննչական մարմնի ձևավորման, մյուս կողմից՝ կոռուպցիայի կանխարգելումն ապահովող ինքնավար մարմնի ստեղծման ճանապարհով։ Այս մարմինները չունեն սահմանադրական կարգավիճակ, օժտված չեն բարձր անկախության երաշխիքներով և ապահովված չեն քաղաքական ազդեցություններից զերծ լինելուց, ուստիև ներկայումս ընթացող սահմանադրական փոփոխությունների համատեքստում այն պետք է ներառել քննարկման օրակարգ։

1.4. Առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը

Որպես առաջին տարբերակ առաջարկվում է ստեղծել մեկ (կենտրոնացված) սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ հակակոռուպցիոն մասնագիտացված մարմին՝ ամրագրելով նախնական քննության, կանխարգելիչ և կրթական գործառույթների կենսագործման համար անհրաժեշտ լիազորությունների շրջանակը։ Ելնելով նշված մարմնի կարևոր դերից և նշանակությունից՝ այն պետք է ունենա նաև սահմանադրական ամրագրում՝ իր անկախությամբ և իրավական երաշխիքներով հանդերձ։ Միևնույն ժամանակ, որպես անցումային տարբերակ կարող է դիտարկվել ապակենտրոնացված, այսինքն՝ առանձին մարմինների միջոցով վերոնշյալ գործառույթների կազմակերպումը, պայմանով, որ անցումային դրույթներում ամրագրվի որոշակի ժամանակ անց ունիվերսալ մարմնին անցնելու անհրաժեշտությունը։

Որպես երկրորդ տարբերակ առաջարկվում է ստեղծել երկու (ապակենտրոնացված) սահմանադրական կարգավիճակ ունեցող մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ։ **Առաջինը՝** կանխարգելիչ և կրթական, **երկրորդը՝** նախնական քննության գործառույթներ իրականացնող անկախ սահմանադրական մարմիններ։ Ելնելով նշված մարմինների կարևոր դերից և նշանակությունից՝ դրանք պետք է ունենան նաև սահմանադրական ամրագրում՝ իրենց անկախության և իրավական երաշխիքներով հանդերձ։

Որպես երրորդ տարբերակ առաջարկվում է Սահմանադրության համապատասխան գլխում ամրագրել հակակոռուպցիոն մարմնի սահմանադրական կարգավիճակը՝ առանց հստակեցնելու, թե կոնկրետ ո՞ր մոդելն է գործելու ՀՀ-ում, միաժամանակ սահմանելով հետևյալ կարգավորումները՝

i. Հակակոռուպցիոն մարմինն ունի անկախության բարձր երաշխիքներ, այդ թվում նաև՝ քաղաքական չեզոքություն։
ii. Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարը ընտրվում է մրցութային կարգով և նշանակվում ԱԺ-ի կողմից՝ սահմանելով քվորումի բարձր շեմ և սահմանափակելով Սահմանադրության 202 հոդվածի 2-րդ մասի կիրառումը վերջինիս նկատմամբ։
iii. Հակակոռուպցիոն մարմնի լիազորությունները՝ նախնական քննության, կանխարգելիչ և կրթական ուղղություններով։
iv. Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարի անձեռնմխելի է և նրա նկատմամբ կիրառվում են այնպիսի անհամատեղելիության պահանջներ, որոնք առկա են ՄԻՊ-ի դեպքում։

1.5. Հիմնավորումները

Ա. Պատմաիրավական տեսանկյունը

ՀՀ-ում հակակոռուպցիոն մարմինների ձևավորման և գործունեության վերաբերյալ զարգացումը պայմանականորեն կարելի է բաժանել 3 փուլերի։

<u>Առաջին.</u> Կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված փուլ (2003-2015թթ.): ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարն ինստիտուցիոնալ առումով սկիզբ է դրվել 2003թ.-ից՝ ՀՀ առաջին հակակոռուպցիոն ռազմավարության[9] ընդունմամբ։ Այդ ռազմավարությամբ խոսվում է

[9] «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1522-Ն որոշում, ընդունված՝ 06.11.2003թ., հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31881:

միայն իրավապահ մարմինների մասին, որոնք մասնակցում են կոռուպցիայի դեմ պայքարին: Հայաստանում տարիներ շարունակ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու հիմնական խոչընդոտներից մեկը եղել է այն, որ երկիրը, որպես այդպիսին, չի ունեցել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ: Հակակոռուպցիոն պայքարը մշտապես ուղեկցվել է իրադրային և կոսմետիկ լուծումներով և իրականացվել է ապակենտրոնացված համակարգի միջոցով, երբ կոռուպցիայի դեմ պայքարելու լիազորություններ են ունեցել մի շարք պետական մարմիններ, այդ թվում՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որը հանդիսանում էր խորհրդակցական մարմին, վերջինիս քարտուղարությունը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինը, վերջինիս Փորձագիտական հանձնախումբը (կանխարգելիչ գործառույթ), Հատուկ քննչական ծառայությունը, Քննչական կոմիտեն, Ազգային անվտանգությունը և Պետական եկամուտների կոմիտեն, Ոստիկանության կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունը, Դատախազության Կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը (իրավապահ գործառույթ): Սակայն, առկա չի եղել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ՝ իր բոլոր տարրերով (հակակոռուպցիոն մարմին/մարմիններ, հակակոռուպցիոն դատախազական և դատական համակարգեր), որը կիրականացներ մասնագիտացված ամբողջական պայքար կոռուպցիայի դեմ:

<u>Երկրորդ.</u> Կոռուպցիայի դեմ պայքարում տարանջատված մոդելին անցման նախնական փուլ մինչհեղափոխական Հայաստանում (2016-2017թթ.): Դեռևս 2016թ.-ի հունիսի 15-ին տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստում[10] Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ներկայացրել է «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրության» արդյունքները[11] և, որպես միջազգային փորձի հիման վրա ամփոփված լավագույն տարբերակ, Կառավարությանն առաջարկել է ձևավորել ինստիտուցիոնալ համակարգ՝ ստեղծելով անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մարմին, որն օժտված կլինի հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիայի կանխարգելում, օպերատիվ հետախուզություն ու նախաքննություն

---

[10] Նիստի արձանագրություն՝ http://www.gov.am/u_files/file/KORUPCIA%2015_06_16%20ev%2017_06_16.pdf?fbclid=IwAR3QdcDqNYTAUv3nX9h nfKEc648xUGimi8NOo5joMnMGwQQtEaBNgHOMQ3k

[11] Ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ արդարադատության նախարարի հունվարի 22-ի թիվ 19-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից, որի շրջանակներում ուսումնասիրվել է ԱՊՀ, Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Ասիայի, Օվկիանիայի և Աֆրիկայի 35 պետության, ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը:

իրականացնելու գործառույթներով: Այդ տարբերակի իրականացման անհնարինության դեպքում միայն, որպես պահեստային տարբերակ, առաջարկել էր ստեղծել երկու առանձին անկախ հակակոռուպցիոն մարմիններ՝ կանխարգելիչ, որը կզբաղվի հակակոռուպցիոն կրթության և կոռուպցիայի կանխարգելման գործառույթների իրականացմամբ՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կարողությունների հենքի վրա, և իրավապահ, որը կզբաղվի միայն կոռուպցիոն հանցագործությունների նախնական քննությամբ, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու գործառույթներով: Արդյունքում, նախորդ կառավարությունը, բավարար քաղաքական կամք չցուցաբերելով, նախընտրելի համարեց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից ներկայացված երկրորդ՝ պահեստային տարբերակը: Իսկ սրա արդյունքում էլ, 2017թ.-ին ընդունվեց «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքը[12], որին հաջորդեց հեղափոխությունը:

<u>Երրորդ.</u> Կոռուպցիայի դեմ պայքարում տարանջատված մոդելին անցման ավարտական փուլ հետհեղափոխական Հայաստանում (2018թ.-առ այսօր): 2019 թվականի փետրվարի 14-ի «ՀՀ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ տրված էր հակակոռուպցիոն մարմնի ստեղծման հետևյալ ձևակերպումը *«Մասնագիտացված, անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն մարմնի ստեղծում, որը կիրականացնի ուսումնասիրություններ, օժտված կլինի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ գործիքակազմով»:*[13] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է ստեղծել Հակակոռուպցիոն կոմիտե՝ որպես մասնագիտացված, անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն մարմին, որը կիրականացնի ուսումնասիրություններ, օժտված կլինի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ գործիքակազմով: Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքի նախագիծը[14] մշակվել է և անցել է հանրային քննարկում: Ռազմավարությունը նաև դրույթներ է պարունակում արդեն իսկ ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերաբերյալ:

Կոռուպցիայի դեմ պայքարում կան նաև այլ դերակատարներ, այդ թվում՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը,[15] որը հանդիսանում է խորհրդակցական

---

[12] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142451

[13] 14.02.2019թ. «ՀՀ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128276

[14] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/2256

[15] 24.06.2019թ. ՀՀ վարչապետի թիվ 808-Ն որոշում,

մարմին, ՀՀ ԱՆ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը, Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուներ նախարարություններում և Կառավարությանը և Վարչապետին ենթակա մարմիններում, որոնք պատասխանատու են իրենց պետական մարմնում հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման և դրանց վերաբերյալ արդյունքները Հակակոռուպցիոն պայքարի խորհրդին զեկուցման համար, Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն ՀՀ դատախազության կազմում, որն իրականացնելու է հսկողություն Հակակոռուպցիոն կոմիտեի նախնական քննության նկատմամբ, նոր ստեղծվելիք Հակակոռուպցիոն մասնագիտացված դատական համակարգը:

Բ. Իրավահամեմատական տեսանկյունը

(1) Միջազգային չափանիշները

1. **ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կարգավորումները**

Հոդված 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում *(...)*

(...) 2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմնին կամ մարմիններին պետք է **ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ**, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և **անհարկի ազդեցությունից ազատված**: *(...)*

Հոդված 36. Մասնագիտացած մարմինները

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ **իրավապահ միջոցների օգնությամբ:** Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք

https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/voroshumNrv098-new.pdf

է **անհրաժեշտ անկախություն ապահովվի**, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթները **առանց որևէ անհարկի ազդեցության**: *(…)*

Վերոհիշյալ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ կոռուպցիայի դեմ պայքարող մասնագիտացած մարմինը պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով.

ա) անկախությամբ, որպեսզի իր գործառույթներն իրականացնի առանց որևէ անհարկի ազդեցության,

բ) պատշաճ որակավորմամբ իր խնդիրների կատարման համար,

գ) պաշարներով:

2. «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի կարգավորումը

Հոդված 20. Մասնագիտացած մարմիններ

Յուրաքանչյուր Կողմ պետք է **ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ**, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան **անհրաժեշտ անկախություն,** այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնել արդյունավետորեն և **առանց որևէ անհիմն ճնշման:** Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ:

Վերոհիշյալ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ կոռուպցիայի դեմ պայքարող մասնագիտացած մարմինը պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով.

ա) կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացմամբ,

բ) անկախությամբ, որպեսզի իր գործառույթներն իրականացնի արդյունավետ և առանց որևէ անհիմն ճնշման,

գ) բավարար պատրաստվածությամբ

դ) ֆինանսական միջոցներով:

3. ԵԽ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի 20 ղեկավար սկզբունքներ

06.11.1997թ.-ին ԵԽ նախարարների կոմիտեն ընդունել է Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին թիվ (97) 24 բանաձևը:[16] Հիմնական սկզբունքներից է՝ **անկախությունը, ինքնավարությունը, անպատշաճ ազդեցությունից զերծ լինելը**: Այսպես, ըստ 3-

[16] 06.11.1997թ.-ի ԵԽ նախարարների կոմիտեի Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին թիվ (97) 24 բանաձև, https://rm.coe.int/16806cc17c

րդ սկզբունքի անհրաժեշտ է ապահովել, որպեսզի կոռուպցիայի կանխարգելման, հետաքննության և դատական որոշման կայացման համար պատասխանատու անձինք իրենց գործառույթներին համապատասխան ունենան **անկախություն** և **ինքնավարություն**, **զերծ լինեն անպատշաճ ազդեցությունից,** ունենան անհրաժեշտ ապացույցներ հավաքելու արդյունավետ միջոցներ, տրամադրել անվտանգության երաշխիքներ այն անձանց, ովքեր աջակցում են իշխանություններին կոռուպցիայի դեմ պայքարում՝ ապահովելով քննության գաղտնիությունը:

4. Ջակարտայի սկզբունքներ

Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարության (Ջակարտայի սկզբունքներ) համաձայն՝ հակակոռուպցիոն գործակալությունների անկախությունն ու արդյունավետությունն ապահովելու համար՝ **նման մարմնի ղեկավարները նշանակվում են մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրա ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը**: Ջակարտայի կարևոր սկզբունքներից է նաև՝ **հանրային մասնակցությունը**, ըստ որի՝ հակակոռուպցիոն գործակալությունները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և ներգրավվեն հանրության մեջ, որպեսզի ապահովեն իրենց **անկախության, արդարացիության և արդյունավետության հանդեպ հանրային վստահությունը:**[17]

5. ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում Հայաստանի վերաբերյալ 4-րդ փուլի զեկույց

2018 թվականի հոկտեմբերին ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում հրապարակվել է Հայաստանի վերաբերյալ 4-րդ փուլի զեկույցը,[18] որի 3-րդ հանձնարարականում նշվում է.

«1. «Սահմանել չափանիշներ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորված **Մրցութային խորհրդի անդամության համար:**

2. Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի **անդամների նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որը զերծ կլինի ցանկացած**

[17] 2012թ.-ի նոյեմբերի 26-27-ին հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարություն, հայերեն տարբերակ՝ https://armla.am/wp-content/uploads/2019/01/Jakarta-statement-2012.pdf, անգլերեն տարբերակ՝ https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf

[18] Զեկույցը ամբողջությամբ հասանելի է՝ https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կդիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից»:

6. **ԳՐԵԿՈ-Ի՝ Կոռուպցիայի կանխարգելումը խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների մասով Հայաստանի վերաբերյալ 4-րդ գնահատման զեկույցը**

2019 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված 4-րդ Գնահատման Զեկույցում, ի թիվս այլ հարցերի (այդ թվում՝ դատական և դատախազական համակարգի վերաբերյալ), ԳՐԵԿՈ-ն անդրադարձել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախությանը: Զեկույցում, մասնավորապես, նշված է. «Խորհրդարանը ընդունել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» նոր օրենք: Օրենքը Հանձնաժողովի անդամների նշանակման գործընթացից վերացնում է մրցութային խորհուրդը և ներդնում է ուղղակի առաջադրումների համակարգ (1 թեկնածու առաջադրվում է կառավարության, 1 թեկնածու՝ ԱԺ մեծամասնության, 2 թեկնածու՝ ԱԺ 2 ընդդիմադիր կուսակցությունների, և 1 թեկնածու՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից): **Այս մոդելի հետ կապված հիմնական մտահոգությունը քաղաքականացման զգալի ռիսկն է** (զեկույցում համապատասխանաբար հղում է կատարվում Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությանը): Սա հակակոռուպցիոն մարմինների համար կենսական նշանակություն ունեցող դրույթ է, քանի որ **քաղաքական միջամտությունից և ազդեցությունից զերծ լինելը՝ նրանց արդյունավետությունն ապահովելու հիմնական սկզբունքն է:**

ՔՀԿ-ները ներկայումս ներկայացված չեն առաջադրման կամ ընտրության գործընթացում: Կառավարությունը և իշխող խորհրդարանական խմբակցությունը կարող են վերահսկել հանձնաժողովի մեծամասնությանը:

ԳՐԵԿՈ-ն ՀՀ իշխանություններին կոչ է արել հավասարակշռված ու կայուն կազմի և թափանցիկ ընթացակարգերի միջոցով ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախությունը: ԳՐԵԿՈ-ն ցանկանում է ընդգծել, որ այս առաջարկություն առավելապես վերաբերում է **Հանձնաժողովի ֆունկցիոնալ անկախությանը**»:[19]

(2) Արտասահմանյան երկրների փորձը

Մեկ (կենտրոնացած) հակակոռուպցիոն մարմիններ ստեղծելու պրակտիկան լայն տարածում է գտել մի շարք երկրներում՝ Լիտվա, Լատվիա, Լեհաստան, Մոլդովա, Հոնգ Կոնգ,

[19] Զեկույցը ամբողջությամբ հասանելի է՝ https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680993e83?fbclid=IwAR0qMlhJpHp_Q_HkNRIMIzdbsizbNzh-068guPEwjgLYdOKAF-cxI4Do23A

Բոտսվանա, և այլ երկրներ: Նման մոդելի միջոցով կոռուպցիայի դեմ պայքարում հաջողության են հասել և ասիական, և հետխորհրդային երկրներ, այդ թվում և ԵՄ երկրներ, և ԱլԳ երկրներ, և աֆրիկյան երկրներ:[20]

Բ. Բովանդակային տեսանկյունը

Այսպիսով, ՀՀ-ում գործում է կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների տարանջատված մոդել՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և մի քանի իրավապահ մարմինների միջոցով, օրինակ՝ Հատուկ քննչական ծառայության, Քննչական կոմիտեի և այլն (մինչև օրենքով սահմանված կարգով կստեղծվի Հակակոռուպցիոն կոմիտեն[21]): Այս մարմինների ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են համանուն օրենքներով: Սակայն, վերոնշյալ մարմինները չեն դասվում Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմինների շարքին, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրված է ինքնավար մարմնի կարգավիճակ, իսկ վերը թվարկված իրավապահ մարմիններն ունեն քննչական մարմնի կարգավիճակ: Քննչական մարմնի կարգավիճակ է ունենալու նաև առաջիկայում ձևավորվող հակակոռուպցիոն կոմիտեն: Օրենքի մակարդակով անկախության երաշխիքների նախատեսման մտահոգությունները կայանում են նրանում, որ դրանք գործնականում չեն ապահովվում, և քաղաքական ազդեցության ենթարկվելու ռիսկը մեծ է: Ընդ որում, հիշյալ մտահոգությունները հաստատվեցին նաև 2018 թվականին: Մասնավորապես, որպես ցայտուն օրինակ կարող ենք բերել հատուկ քննչական ծառայության պետի հրաժարական տալը՝ 2018 թվականին ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական գործընթացների արդյունքում, այն դեպքում, երբ «Հանրային ծառայության մասին» օրենքի առումով այդ պաշտոնը ինքնավար պաշտոն է, և այն զբաղեցնող անձն իր պաշտոնավարման ժամանակահատվածում չի փոփոխվում՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Անկախության երաշխիքի՝ վտանգի տակ լինելու մեկ այլ ցայտուն օրինակ է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը,[22] որի ընդունմամբ առանց որևէ իրավական

---

[20] Մարմինների վերաբերյալ արտասահմանյան երկրների փորձ, https://www.oecd.org/corruption/acn/specialisedanti-corruptioninstitutions-reviewofmodels.htm

[21] Պետք է նշել, ոչ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով սահմանված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը հաջորդող 3 տարին սահմանվելու է որպես անցումային շրջան: Դա նշանակում է, որ այդ 3 տարվա ընթացքում պահպանվելու է Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնելու հնարավորությունը, որպեսզի հնարավոր լինի անցումային շրջանում սահուն կերպով ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից գործերի քննության արդյունավետությունը:

[22] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ,

հիմնավորումների վերացվեց Հանձնաժողովի մրցութային խորհուրդը, որն ապահովելու էր Հանձնաժողովի անդամների ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը: Արդյունքում, Հանձնաժողովի անդամների առաջադրումները և նշանակումները եղան ոչ թե մասնագիտական, այլ քաղաքական՝ Կառավարության, ԱԺ երեք խմբակցությունների և ԲԽԴ-ի կողմից: Համանման գնահատական է տվել նաև ԳՐԵԿՈ-ն՝ 2019 թվականին հրապարակած 4-րդ գնահատման զեկույցով:

Արդյունքում, պրակտիկան ցույց տվեց, որ այն մարմինները, որոնք օժտված են բարձր անկախությամբ երաշխիքներով, շարունակեցին իրենց բնականոն գործունեությունը, ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանը:

Այս պրակտիկ օրինակները լավագույնս ցույց են տալիս, թե ինչո՞ւ է հարկավոր հակակոռուպցիոն մարմնին/մարմիններին տալ սահմանադրական կարգավիճակ: Ընդ որում, Սահմանադրությամբ նախատեսվելու պարագայում, համապատասխան հոդվածները չպետք է ենթարկվեն փոփոխության Սահմանադրության 202 հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

Հարկ է նաև նշել, որ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների կարգավիճակի քննարկման համատեքստում, ածանցյալ հարց է նաև՝ մոդելի ընտրությունը: Մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության տեսանկյունից Հայաստանին կենտրոնացվա՞ծ, թե՞ ապակենտրոնացված մոդել է հարկավոր: Հարցը քննարկվել է նաև փորձագիտական տարբեր շրջանակներում: Ստորև ներկայացնենք դրանից մի քանիսը:

2019 թվականի ապրիլի 17-ին և 18-ին Երևանում անցկացվեց «**ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ միջազգային լույսի ներքո» թեմայով կառավարություն-քաղաքացիական հասարակության փորձագիտական միջազգային համաժողովը**: Համաժողովը կազմակերպվել էր Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ու Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի հետ համագործակցությամբ: Երկօրյա համաժողովի շուրջ 220 մասնակիցները ներկայացնում էին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի մարմինները, միջազգային կազմակերպություններն ու Հայաստանում հավատարմագրված դեսպանությունները, մասնավոր ոլորտը, քաղաքացիական հասարակության կառույցները, փորձագիտական հանրույթն ու ԶԼՄ-ները: Համաժողովը յուրօրինակ էր նրանով, որ մասնակիցների ցանկը ընդգրկում էր հակակոռուպցիոն ոլորտի բոլոր դերակատարներին՝

---

http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10588&Reading=0&fbclid=IwAR1tTsQZRZO76ri8iuwm W-nLW54f6zXZD3YiEKQyP5kjeobb-zP44pXVbes:

ազգային և միջազգային մակարդակով: Ի թիվս այլոց, Համաժողովի նպատակներից՝ **ուրվագծել հակակոռուպցիոն մարմնի վերաբերյալ հիմնական մոտեցումներն ու տեսլականը:** Ըստ համաժողովի ամփոփման արդյունքների՝ նկատի ունենալով հայաստանյան համատեքստը, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքները, Համաժողովի մասնակիցները արձանագրեցին հետևյալը՝ հակակոռուպցիոն մարմնի սահմանադրական անկախության հարցը առաջին փուլում լուծելուց հետո միայն, մասնագիտական հանրության հիմնական դերակատարների մասնակցությամբ լրացուցիչ մասնագիտական քննարկման համախոհության արդյունքում որոշել, թե ՀՀ-ի իրավական և մշակութային համատեքստին համապատասխան հակակոռուպցիոն մարմնի ո՞ր մոդելը կարող է առավել արդյունավետ գործել՝ ունիվերսալ, թե ապակենտրոնացված: Միաժամանակ, առանձնացվեց **չորս հիմնական չափորոշիչ**, որոնց հիման վրա նպատակահարմար է ստեղծել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինը: Մասնակիցները չափորոշիչները քննարկել և առաջարկել են հիմք ընդունելով հայաստանյան իրավական համատեքստը և մշակույթը, միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև հակակոռուպցիոն գործակալությունների մասին 2012 թվականի Ջակարտայի սկզբունքները: Հիշյալ չորս չափորոշիչներն են՝ **անկախություն, մասնագիտացված աշխատակազմ, ֆինանսական ռեսուրսներ, հանրության հետ աշխատանք:**[23]

Տարբեր միջազգային կազմակերպություններ և փորձագետներ ևս իրենց կարծիքն են հայտնել, թե որ մոդելը առավել արդյունավետ կգործի ՀՀ-ում: Ըստ այդ, 2019 թվականին **ԵԱՀԿ փորձագետները «Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումներ ուժեղացում» ծրագրի շրջանակներում** առաջարկել են ստեղծել մեկ հակակոռուպցիոն մարմին՝ երկու վարչություններով. 1. Կոռուպցիայի կանխարգելման վարչություն, 2. Կոռուպցիայի դեմ պայքարի վարչություն: Վարչությունները կղեկավարվեն Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարի երկու տեղակալների կողմից: Ի լրումն առաջարկվել է նաև ստեղծել 9 անդամներից բաղկացած հասարակական խորհուրդ:

Իսկ ահա «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» կազմակերպության անդամ, դոկտոր Վալց Կալնինշը կարծիք է հայտնել առ այն, որ **ապակենտրոնացված մոդելների պարագայում գործ ունենք ավելի քիչ ռիսկայնության հետ,** քանի որ եթե մարմիններից մեկը ձախողվի, կարելի է հուսալ, որ մյուսը կշարունակի գործել: Ունիվերսալ մոդելն ավելի ռիսկային է, քանի որ ողջ «խաղադրույքը» կատարվում է մեկ մարմնի վրա: Վերջինիս ձախողման պարագայում

[23] «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ միջազգային լույսի ներքո» թեմայով կառավարություն-քաղաքացիական հասարակության փորձագիտական միջազգային համաժողովի արդյունքների ամփոփում, https://armla.am/43426.html

ձախողվում է կոռուպցիայի դեմ ողջ պայքարը։[24]

2.5. Ամփոփումը և ակնկալվող արդյունքները

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա, գտնում ենք, որ ՀՀ-ում պետք է ստեղծել իշխանության բոլոր թևերից անկախ՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող մասնագիտական հակակոռուպցիոն մարմին՝ մեկ (կենտրոնացված) կամ երկու (ապակենտրոնացված) մարմինների տեսքով, որը/որոնք գործունեություն կծավալի/կծավալեն մշտական հիմունքներով, ղեկավարումը կիրականացվի/կիրականացվեն միանձնյա (ոչ կոլեգիալ) և որի/որոնց հիմնական գործառույթները կլինեն կոռուպցիայի կանխարգելումը, հակակոռուպցիոն կրթությունը և կոռուպցիոն գործերով նախնական քննության իրականացումը։ Ըստ այդմ, առաջարկում ենք երկու տարբերակ։

Որպես առաջին տարբերակ առաջարկվում է ստեղծել կենտրոնացված հակակոռուպցիոն մարմին, մասնավորապես՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ հակակոռուպցիոն մարմին՝ ամրագրելով նախնական քննության, կանխարգելիչ և կրթական գործառույթների կենսագործման համար անհրաժեշտ լիազորությունների շրջանակը։

Միևնույն ժամանակ, որպես անցումային տարբերակ կարող է դիտարկվել ապակենտրոնացված, այսինքն՝ առանձին մարմինների միջոցով վերոնշյալ գործառույթների կազմակերպումը, պայմանով, որ անցումային դրույթներում ամրագրվի որոշակի ժամանակ անց ունիվերսալ մարմնին անցնելու անհրաժեշտությունը։

Որպես երկրորդ տարբերակ առաջարկվում է ստեղծել ապակենտրոնացված հակակոռուպցիոն մարմիններ, մասնավորապես՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող երկու առանձին մարմին։ **Առաջինը՝** կանխարգելիչ և կրթական, **երկրորդը՝** նախնական քննության գործառույթներ իրականացնող անկախ սահմանադրական մարմիններ։

Որպես երրորդ տարբերակ առաջարկվում է Սահմանադրության հակակոռուպցիոն մարմիններ գլխում ամրագրել հակակոռուպցիոն մարմինների սահմանադրական կարգավիճակն և անկախության երեաշխիքները՝ առանց հստակեցնելու, թե կոնկրետ ո՞ր մոդելն է գործելու ՀՀ-ում, միաժամանակ սահմանելով Հակակոռուպցիոն մարմինների գործառույթներն ու լիազորությունները, ԱԺ կողմից պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդով Հակակոռուպցիոն մարմինների ղեկավարների ընտրության մրցութային կարգը,

[24] «Բազմաֆունկցիոնալ և տարանջատված ֆունկցիաներով հակակոռուպցիոն մարմիններ Նկատառումներ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի առնչությամբ», Վալց Կալնինշ, Ապրիլ 2019թ., https://transparency.am/files/publications/1555671173-0-623989.pdf

ժամկետները և պահանջները, ինչպես նաև Հակակոռուպցիոն մարմինների գործունեության երաշխիքները՝ անձեռնմխելիության իրավունք, անհամատեղելիության պահանջներ և այլն։

Անկախ այն հանգամանքից՝ **կընտրվի կենտրոնացվա՞ծ, թե ապակենտրոնացված մոդելը, թե երրորդ տարբերակը,** ելնելով նշված մարմնի կարևոր դերից և նշանակությունից, Սահմանադրության Հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ առանձին գլխով կարգավորել մասնագիտական հակակոռուպցիոն մարմնի/մարմինների գործառույթները և լիազորությունները, ղեկավարի ընտրության կարգը, մարմնի/մարմինների գործունեության երաշխիքները։ Նախատեսել, որ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների ղեկավարի թեկնածուների ընտրությունը կատարվում է բաց և հրապարակային մրցույթի արդյունքում, իսկ ղեկավարին ընտրում է Ազգային ժողովը։ Ընդունել առանձին օրենք/ներ, որը/որոնք կբխեն Սահմանադրությունից և որով/որոնցով կկանոնակարգվի այդ մարմնի/մարմինների այլ լիազորությունները։ Հիշյալ օրենքով սահմանել, որ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների աշխատակազմի անդամների ընտրությունը իրականացվում է բաց և հրապարակային մրցույթի արդյունքում՝ նախապես սահմանված հստակ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա։ Նախատեսել նաև, որ մարմնի/մարմինների կազմում ստեղծվում է հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհուրդ, որը վերահսկողություն է իրականացնում հակակոռուպցիոն մարմնի/մարմինների գործունեության նկատմամբ։

Արդյունքում, կունենանք հակակոռուպցիոն սահմանադրական մարմին/մարմիններ, որը/որոնք կունենա (ն) անկախության բարձր երաշխիքներ և արդյունավետ կերպով կիրականացնի (նեն) իր (ենց) մասնագիտական՝ հակակոռուպցիոն կրթության, կոռուպցիայի կանխարգելման և նախնական քննության գործառույթները՝ անկախ օրվա քաղաքական իշխանություններից։

Կարեն Զաղոյան
Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահ,
Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձագիտական խումբ
31.08.2020թ.